յաստանին են «դիջում» այն հողամասը, որ արդէն իսկ Հայաստանի մէջ է։

Լոռին Հայաստանինն է, եւ նրա մասին «վէճի» ու «դիջումի» խօսք լինել չէ կարող, այլ այն մասին միայն, որ Լոռու մի քանի գիւղերը, որ այսօր նրանից դուրս են գտնւում, նորէն իր մէջ առնուին։ Բուն վէճը ուրեմն խակական Բորչալուի մասին է, որի բովանդակութիւնը վրացիք այնպէս սիրով լայնացնում են, Լոռին էլ մէջը առնելով։ Եթէ ուրեմն Հայաստանի եւ Վրաստանի միջեւ վէճի խնդիր կայ, Բորչալուի, աւելի շուտ՝ նրա մեծ մասի շուրջն է պտտում այն — Լոռիի լեռներից մինչեւ Խրամ գետը տարածուող դաշտային հողամասի շուրջը։

Եւ որովհետեւ այդ տարածութիւնը Բորչալուի դաշտը ամբողջովին չէ որ առնում է իր մէջ, այլ նրա մեծ մասը, եւ որովհետեւ Հայաստանի պահանջները այդ վերջին հողամասին են միայն վերաբերում, ուստի եւ նպատակայարմար է միանգամայն, որ հայ–վրացական հողային վէճի շուրջը խօսք անելիս ոչ թէ առհասարակ Բորչալու, այլ Հայկական Բորչալու արտայայտութիւնը գործածուի, ինչ որ արդէն արւում է վերջերս մեր մամուլի մէջ։ Միայն թէ, կրկնում ենք, մոռնալու չէ երբեք, որ խօսքը վերաբերում է Լոռիից այն կողմը, միմիայն Խրամ տարածուող հարթավայրի միայն։ Վրացիք, ինչ խօսք, այդ «Հայկական Բորչալու» անուան տակ եւս պիտի շարունակեն հասկանալ Լոռին միայն, քանի որ վերջինս երբեմն դժբախտութիւն է ունեցել ցարական չինովնիկների ձեռքով «Բորչալուի գաւառ»ի մէջ առնուելու։

LXIX

Հիմա տեսնենք, թէ նախկին Բորչալուի գաւառի այն մասը, որ Լոռիից դուրս է գտնւում, նրանից հիւսիս, ու տարածւում է մինչեւ Խրամ գետը, ուրիշ խօսքով, Հայկական Բորչալուն ի՛նչքան տարածութիւն է գրաւում եւ ի՛նչ ազդարնակութիւն ունի։

Նախկին Բորչալուի գաւառը, ասացինք, 6000 քառակուսի վերստ (կլոր հաշուով միշտ) տարածութիւն էր գրաւում, դրանից 5000 քառ. վերստը աջ կողմը, դէպի հարաւ. այն, որ մենք հայկական ենք անուանում։ Նախկին Բորչալուի գաւառից այժմեան Լոռի–Փամբակ գաւառի մէջ է առնուած 2400 քառ. վերստ տարածութիւն։ Դուրսն է մնում ուրեմն 2600 քառ. վերստ տարածութեամբ մի հողամաս։ Նայած, ի հարկէ, թէ ճիշդ սահմանը ի՛նչ գծերով ենք ուզում անցկացնել, ըստ այնմ էլ կարող է մեծանալ կամ փոքրանալ վէճի առարկայ հողամասը։ Այս տեսութեան առաջին յօդուածներից մէկում 2200 քառ. քմ. էինք հաշուել այն։ Ուրեմն դրա եւ 2500 քառ. քմ. շուրջն է պտտում խօսքը։

Համախորհրդային (1926 թ.) վիճակագրութեան տուեալները ըստ գաւառների եւ նրանց գեղագրական պատկերի՝ դեռ չեն հրապարակուած դժբախտաբար. գոնէ մեզ ծանօթ չեն։ Յամենայն դէպս, չենք կարծում որ նրանք առանձին տարբերութիւն ներկայացնեն նախապատերազմեան վիճակի բաղդատութեամբ։

Արդ, համաձայն 1914 թուականի վիճակագրութեան, որ ամփոփուած ենք գտնում «Կովկասեան Տարեգրքի» մէջ, ամբողջ Բորչալուի գաւառը ունէր (կլոր հաշուով) 174 հազար բնակիչ (1886–ին՝ 101 հազար, 1897–ին՝ 128 հազար)։ Հայերը կազմում էին 43·3 տոկոս, բոլոր մահմեդականները՝ 30 տոկոս, ռուսները՝ 6·8 տոկոս, վրացիները՝ 1·75 տոկոս։ Մնացածը՝ յոյներ, գերմաններ եւ ուրիշ ազգութիւններ։

Այս նշանակում է ուրեմն, որ հայերը ուրիշ ազգութեանց հանդէպ բազդատական մեծամասնութիւն էին կազմում Բորչալուի ամբողջ գաւառի մէջ, մէջն առնելով նաեւ Խրամի ձախ ափը։ Լոռիում հօ բացարձակօրէն գերակշռող էր եւ է այժմ էլ հայութեան թիւը (ամբողջ բնակչութիւնը՝ 45,000)։

Հայերից յետոյ երկրորդ տեղը բռնում էին — եւ են — մահմեդականները, երրորդ տեղը՝ ռուսները։ Վրացիների համեմատութիւնը շատ աննշան է. նրանց բացարձակ թիւը մի քանի հազարից դէնը չի անցնում։

Հիմա վեր առնենք միայն Հայկական Բորչալուն, այսինքն՝ այն հողամասը, որ այսօր Վրաստանի մաս է կազմում (դարձեալ «Բորչալուի գաւառ» անուան տակ), եւ սակայն այն